

տեցեք² ճգնութեամբ ձերով³»։ 55Եւ լուեալ սրբոցն՝ երկիր պագին⁴ առաջի սրբոյ սեղանոյն։ 56Եւ ելեալ արտաքս⁵ եւ գնաց Պաղիկարպոս⁶ առաջի սրբոյ⁷ խաչին եւ անդ⁸ սկսաւ աղաչել⁹ զԱստուած՝ վասն խաղաղութեան ամենայն¹⁰ աշխարհի, եւ¹¹ զեկեալ թշնամին¹² խորտակելոյ եւ աղքատաց մնալ ի տեղիս¹³ իւրեանց։

57Եւ¹⁴ յանկարծակի¹⁵ հասին զաւրբն Պարսից. եւ իբրեւ եկին ի դռնն Պաղիկարպոսի¹⁶, վաղվաղակի¹⁷ հատին զպարանոց Նորա եւ ձգեցին¹⁸ առաջի խաչին։ 58Եւ ինքեանք եկին¹⁹ մինչեւ²⁰ ի դռնն եկեղեցոյն²¹ եւ տեսին²² զկրանաւորսն²³ յարտասուս եւ յաղաւթս պարապեալ²⁴։ 59Եւ յարձակեալ ի վերայ²⁵ զեթանքեանն²⁶ կոտորեցին²⁷. եւ էին²⁸ այսոքիկ²⁹. Թեովնաս³⁰, Պաղիկարպոս, Սիմեովն³¹, Յովհան³², Եպիփան, Դիմառիոս, Ենարկիոս³³։ 60Սոքա³⁴ կոտորեցան³⁵ ի զաւրացն³⁶ Միհրանայ յամսեանն Բաղոց, որ աւր երրորդ³⁷ էր, յաւուր հինգշաբաթի, յիններորդ ժամու³⁸։

-
- 1 *hm* տեղի լուսաւորս, *o* լուսաւոր տեղին *ի/ս* տեղիսն լուսեղէնս (*sv*)
2 *hmo* պատրաստեալ էք, *sv* պատրաստեցիք *ի/ս* պատրաստեցեք (*l*)
3 *hmo* ձերով ճգնութեամբ (*o* ճգնութեամբդ) *ի/ս* ճգնութեամբ ձերով (*sv*)
4 *h* երկիր պագեցին, *mo* երկրպագեցին *ի/ս* երկիր պագին (*sv*)
5 *hmo* արտաքս ելեալ *ի/ս* ելեալ արտաքս (*sv*)
6 *hmo* Պաղիկարպոս գնաց *ի/ս* գնաց Պաղիկարպոս (*sv*)
7 *hm* չիք սրբոյ
8 *hmo* չիք անդ
9 *sv* աղօթել եւ աղաչել
10 *mo* չիք ամենայն
11 *hm* չիք եւ
12 *hmo* թշնամիսն *ի/ս* թշնամին (*sv*)
13 *h* տեղի
14 *hmv* չիք եւ
15 *m* յանկարծ
16 *hmov* տեսին զՊաղիկարպոս *ի/ս* եկին ի դռնն Պաղիկարպոսի (*sv*)
17 *o* չիք վաղվաղակի
18 *hmsov* ընկեցին *ի/ս* ձգեցին (*l*)
19 *hmov* փութապէս եկին
20 *hmo* չիք մինչեւ
21 *l* *hmo* եկեղեցոյն
22 *l* տեսեալ
23 *hm* զկրանաւորս
24 *hmo* ի պաղատանս առ Աստուած *ի/ս* յաղաւթս պարապեալ (*sv*)
25 *o* վերայ սրբոցն առժամայն / *m* վերայ առժամայն
26 *s* զեթանքեանն
27 *hmo* սպանին *ի/ս* կոտորեցին (*sv*)
28 *hmov* որոց անուանքն են *ի/ս* եւ էին (*sv*)
29 *hm* այս *ի/ս* այսոքիկ
30 *l* Թեովնաս
31 *sv* Սիմեոն, *hm* Սիմեոն, *o* Սիմեովն *ի/ս* Սիմեովն (*l*)
32 *mo* Յովհաննէս, *hsv* Յովհաննէս *ի/ս* Յովհան (*l*)
33 *o* Նարկետոս, *mv*² Նարետոս, *h* Յարետոս *ի/ս* Ենարկիոս (*sv*)
34 *hmov* սոքա եթանքեան
35 *hmov* կատարեցան *ի/ս* կոտորեցան (*sv*)
36 *hm* զօրացն Պարսից
37 *hmov* Դ, *s* Գ *ի/ս* երրորդ (*sv*)
38 *o* ընդ երեկաւորն, *hm* երեկս աւուրն *ի/ս* յաւուր հինգշաբաթի յիններորդ ժամու (*sv*)